ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան Մելիք Ադամյան 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՖՆ-ԲԸՀՇՁԲ-15/14 ծածկագրով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի արդյունքում 2015թ-ի հոկտեմբերի 5-ին կնքված պայմանագրում 2015թ-ի նոյեմբերի 4-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: Ծառայությունների մատուցման գործընթացը սկսելու նպատակով նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը համաձայնագրով հաստատել են ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում: Փոփոխությունը կատարվում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ Պայմանագրի 7.1 կետի համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ. Ջանջուղազյանին:

Հեռախոս՝ 094 49 13 38:
Էլ.փոստ՝ info@interlimens.com:
Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2015թ. Հոկտեմբերի 5-ին կնքված N ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/14 պայմանագրի

ք. Երևան "...6..." նոյեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Գյուլբուդաղյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 05/10/2015թ. կնքված N ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/14 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.Կողմերը որոշեցին՝

1.1 հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի.

1.2 սահմանել, որ Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայությունների դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
ք. Երևան, Մելիք Ադամյան 1	ք. Երևան, Վաղարշյան 8/1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 00040569
ՀՀ 900013574018	ՀՀ 1630081477775
ՀՀ 900013202016	
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված
"05" հոկտեմբերի 2015թ. կնքված
N ՖՆ-ԲԸՀՇՁԲ-15/14 պայմանագրի հիման վրա
"....4...." նոյեմբերի 2015թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՖՆ 2015թ. միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում		
	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
ՀՀ ֆինանսների նախարարության համար գնահատման հետ կապված խորհրդատվական ծառայություններ	3600000	3600000	3600000

** Գումարները ներկայացված են աճողական:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մելիք Ադամյան 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900013574018
Հ/Հ 900013202016

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
ք. Երևան, Վաղարշյան 8/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 00040569
Հ/Հ 16300814775

(ստորագրություն)